

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔԸ

Լևոն Օնիկի Ալոյանի՝ «Պատմության թեման արևմտահայ ռոմանտիկական արձակում» ատենախոսության մասին

Գեղարվեստական գրականության համապատկերում պատմության և ընդհանրապես անցյալի թեմատիկային նվիրված գիտական ուսումնասիրություններն այսօր համաշխարհային գրականագիտության ուշադրության կենտրոնում են: Պատմության վերարժևորումը և երեք ժամանակների հարաբերությունը (*պատմության ժամանակ, հեղինակի ժամանակ և ընթերցողի ժամանակ*) վերլուծվում են տեսական ամենատարբեր մոտեցումների համատեքստում: Լևոն Օնիկի Ալոյանի ատենախոսության մեջ կիրառվում է նույն մոտեցումը. նա ժամանակակից հայացքով և գիտական համապատասխան գործիքակազմով է ուսումնասիրում արևմտահայ ռոմանտիկական պատմավեպը:

Աշխատանքն ունի կուռ կառույց, որ բխում է ընդհանուր վերնագրի տրամաբանությունից:

Ներածություն բաժնում ատենախոսն անդրադառնում է հարցի պատմությանը, հիմնական տեսակետներին, բանաձևում խնդիրները, հիմնավորում արդիականությունը, գիտական նորույթը, թվարկում մեթոդները:

Առաջին գլուխը («Ռոմանտիզմը արևմտահայ պատմավիպասանության մեջ») ունի առավելապես տեսական ուղղվածություն: Լ. Ալոյանը համապատասխան ենթագլուխներում անդրադառնում է ռոմանտիկական վեպի տեսական առանձնահատկություններին, դրա հայկական արտահայտություններին, պատմավեպի ժանրային խնդիրներին, տալիս արևելահայ և արևմտահայ պատմավիպասանության ընդհանուր բնութագիրը, ժամանակի գրական-գրականագիտական պատկերը: Ուսումնասիրության այս բաժնում տեղ են գտել նաև վիճահարույց հարցերի դիտարկումներ (օրինակ՝ պատմավեպի ժանրային սահմանները, պատմագեղարվեստական

գրականություն-պատմագիտություն բանավիճային խնդիրները և այլն), որոնք վերլուծելիս ատենախոսը դիտարկում է եղած կարծիքները և վստահորեն հիմնավորում իր տեսակետը:

Երկրորդ գլխում («Ծերենցի պատմափիլիսոփայական հայացքները») արդեն անդրադարձ է տրվում հայ պատմագրության հիմնադրի՝ Ծերենցի ստեղծագործություններին: Ատենախոսը վեպերը դիտարկում է հիմնականում պատմականի և գեղարվեստականի հարաբերակցության ծիրում՝ հարցին մոտենալով նաև միջտեքստայնության մոտեցմամբ: Նա հետևողականորեն ուսումնասիրում է Սեբեոսի, Ղևոնդի, Հովհաննես Դրասխանակերտցու, Թովմա Արծրունու, Մատթեոս Ուռհայեցու, Սմբատ Սպարապետի, Ղևոնդ Ալիշանի աշխատությունները և դիտարկում, թե գեղարվեստական երկերի համապատկերում ինչ փոփոխությունների են ենթարկվել դրանք: Ավելին՝ ինչպես է նրանց տեքստերի ուղղակի և անուղղակի մեջբերումների միջոցով հեղինակը հավաստիություն հաղորդել իր պատումին, և ինչ դեր են ստացել այդ միջտեքստային հատվածները գրական կոմպոզիցիայի կառույցում: Այս ուսումնասիրությունը կատարելիս Լ. Ալոյանը կիրառում է նաև զուգադրական մեթոդը՝ ներկայացնելով, թե այդ պատմիչների երկերից տարբեր հատվածներ ինչպես են վերարժևորվել արևելահայ պատմափյառսանների՝ Րաֆֆու և Մուրացանի վեպերում:

Երկրորդ գլխի երրորդ ենթագլխում («Պատմությունը և փիլիսոփայությունը») ատենախոսի հայացքը վիպական պատմական իրականության կերպավորման խնդրից տեղափոխվում է 19-րդ դարի ժամանակային իրադրություն. քննվում են ստեղծագործական գործընթացին նախորդող կամ համաժամանակյա իրադարձությունները՝ Ծերենցի անձնական տպավորությունները, ճանապարհորդությունները, ժամանակակիցների վկայություններն ու նամակները և այն պատմական անցքերը, որ առիթ են դարձել հեղինակի համար՝ պատմական անցյալին նայելու և այդ թեմատիկայով ստեղծագործելու:

Այս գլխում առանցքային է նաև «Թորոս Լևոնի» վեպի սկզբնամասի քննությունը, թե ինչպես է Ծերենցը Կոստանդնուպոլիսը նկարագրելիս այն ներկայացնում

երկու ժամանակների հարացույցում, կերպավորում ընթերցողի ժամանակը և նրա ներկայից նայում անցյալի դեպքերին: Լ. Ալոյանն այս հատվածում պատումի տեսության դիրքերից քննում է *պատմողի դիտանկյան խնդիրը* (էջ 51), որ Ծերենցի գործերի պարագայում նկատվում է առաջին անգամ:

Երրորդ գլուխը («Ծերենցի պատմավիպասանության պոետիկան») նվիրված է վեպերի նեղ գրականագիտական խնդիրների ուսումնասիրությանը, տեսական հարցադրումների քննությանը: Առաջին ենթագլխում («Կառուցվածքային առանձնահատկությունները») ատենախոսն անդրադառնում է սյուժեի ու ֆաբուլայի հարցերին: Նա դիտարկում է միագիծ ու բազմագիծ սյուժեների, ներդիր պատումների խնդիրները, թե ինչպես են դիպաշարի կառուցման առանձնահատկությունները և Ծերենցի մոտեցումները փոփոխվում երեք վեպերի համապատկերում, ինչպես է մի հերոսի կյանքի ճանապարհի վրա կենտրոնացած պատումը հետագա վեպերում դառնում բազմաշերտ ու բազմապլան: Ուսումնասիրության այս հատվածում դիտելի են նաև այդ սյուժետային գծերի միջև անցումների քննությունները, երբ ատենախոսը դիտարկում է էլիպսիսները ու հայ ժողովրդական հեքիաթների օրինակներով կատարվող անցումները՝ հարցը նորից քննելով ընդհանուր հայ պատմավեպերի օրինակներով ու բերելով համապատասխան մեջբերումներ:

Հաջորդող երկու գլուխներն անդրադառնում են կերպարակերտման ու լեզվաոճական առանձնահատկություններին (համապատասխանաբար՝ «Կերպարակերտումը» և «Լեզվաոճական առանձնահատկությունները»): Լ. Ալոյանը քննում է վեպերի կերպարային համակարգը, ներկայացնում հիմնական ու երկրորդական կերպարներին, տալիս նրանց գործառական, նշանային ու հոգեբանական նկարագրերը: Այս պարագայում ևս ատենախոսը կարևոր շեշտադրում է կատարում պատմիչների աշխատությունների վրա՝ ներկայացնելով կերպարին նախ՝ պատմական տեքստում, ապա՝ գեղարվեստական պատումի դաշտում: Նա առանցքային կարևորություն է տալիս նաև կանանց կերպարների վերլուծությանը, սիրային ու ընտանեկան հարաբերություններին:

Տեքստերը լեզվաոճական վերլուծության ենթարկելիս ատենախոսն ընդգծում է էպոս-վեպ զուգահեռը՝ քննելով «Սասնա ծռեր» էպոսից վեպերի լեզվական դաշտ անցած և կերպափոխված արտահայտություններն ու դարձվածքները, ներկայացնելով դրանց կիրառման ու զարգացման օրինակները:

Եզրակացություններ բաժնում ատենախոսը տալիս է դեռևս ներածության մեջ թվարկած խնդիրների բարձրացման ու վերլուծման արդյունքում ստացած հիմնավոր եզրահանգումները, որ բխում են ընդհանուր շարադրանքից ու հստակ ներկայացնում են ստացված արդյունքները:

Օգտագործված գրականության ցանկը ամբողջական է ու սպառիչ՝ այն ներառում է շուրջ 100 աղբյուր (նաև՝ ռուսերեն ու անգլերեն աշխատությունները): Ուսումնասիրվել ու համապատասխան մեջբերումներով կամ հիշատակումներով ներկայացվել են նյութի մասին գրված հիմնական աշխատություններն ու հոդվածները, պատշաճ գնահատվել են ծերենցագիտության ավանդները:

Ատենախոսությունն աչքի է ընկնում դրական բազմաթիվ կողմերով՝ Լ. Ալոյանն անդրադառնում է ուշարժան տարբեր հարցադրումների՝ ժողովրդի անձայն ներկայություն, վիպական կոմպոզիցյաի կառույցում ժողովրդական բանահյուսությունից քնարական ու էպիկական մեջբերումներ, կառուցվածքային բազմաշերտ պատում և այլն, որոնց մեկ գրախոսության կառույցում անդրադառնալը, սակայն, անհնար է:

Լ. Ալոյանը կատարել է հետևողական ու հիմնավոր գիտական աշխատանք, գրականագիտական ամենատարբեր դիտանկյուններից քննել Ծերենցի վեպերը, խնդիրը դիտարկել ժամանակաշրջանի և հարցի պատմության համատեքստում: Լեզուն գիտական է, ոճն ու կառույցը լիովին համապատասխանում են թեկնածուական ատենախոսության պահանջներին, վրիպակները հազվադեպ են, օգտագործված է տերմինաբանական ճիշտ բառապաշար, սեղմագիրն ու տպագրված հոդվածներն արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը: Ամենուր նկատելի են գիտական ղեկավարի՝ պրոֆ. Ալ. Մակարյանի արդյունավետ ազդեցու-

թյունն ու ճիշտ ուղղորդումը, որի արգասիքն է այսօր պաշտպանության ներկայացված նման խոստումնալից աշխատությունը:

Որպես թերություն թերևս պետք է նշել միայն առաջին գլխի երկրորդ ենթագլխում («Պատմական թեման XIX դարի երկրորդ կեսի հայ գրականության մեջ») պատմական թեմայով գրված բանաստեղծական ու դրամատիկական երկերի մանրամասն քննությունը, որ ինչ-որ չափով շեղվում է ատենախոսության հիմնական հարցադրումից: Դա, ճիշտ է, ստեղծում է պատմական միջավայր, ներկայացվում են հիմնական հոսանքներն ու թեմաները, բայց այն ծանրաբեռնում է նյութը, առավել ևս, որ ատենախոսը չունի ծավալային խնդիրներ և կարող էր այդ հարցերին ավելի մակերեսորեն անդրադառնալ:

Ամփոփելով նշեմ, որ Լ. Ալոյանի «Պատմության թեման արևմտահայ ռոմանտիկական վեպի արձակում» թեկնածուական ատենախոսությունը՝ Ժ. 01. 01 - «Հայ միջնադարյան և նոր գրականություն» մասնագիտությամբ, միանգամայն բավարարում է ներկայացվող պահանջները, և հեղինակը լիովին արժանի է իր հայցած՝ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Աստղիկ Սողոյան

Բանասիրական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան

գրականության ինստիտուտի գիտաշխատող

27.01.2026

Խաչատուրյան ԿՏ Սեդրիկ Մուշակյան
Արտագրություններ
 Ռ. Ռաբինովիչ